Հայ գրականության օլիմպիադայի մարզային փուլի հարցաշարեր (2024-2025 ուստարի)

(Տևողությունը 3 ժամ)

12-րդ դասարան

1. Ո՞վ է Շահան Շահնուրը։ Ի՞նչ անվանում է ստացել Շահնուրի գրական ժառանգությունը։ Բացատրի՛ր «Նահանջը առանց երգի» վերնագիրը։ Ովքե՞ր և ինչի՞ց էին նահանջում Շահնուրի հերոսները։ Գրի՛ր նահանջը ներկայացնող հատվածը։ Դու կարո՞ղ էիր չնահանջել…

10 միավոր

2. Կոստան Զարյանին բնութագրել են «հայ գրականության մենակը» շրջասույթով։ Փորձի՛ր բացատրել՝ ելնելով «Նավը լեռան վրա» վեպի «կենսագրությունից»։ Ինչո՞ւ նավը մնաց Քանաքեռի բարձունքում։ Ի վերջո, քո կարծիքով, կբարձրանա՞ մեր նավը բիբլիական լեռան գագաթը։

10 միավոր

3. Անցի՛ր Մահարու անցած տառապանքի ուղիներով և հյուսիր կյանքին սիրահարված մարդու երգը՝ ըստ «Ծաղկած փշալարեր» վիպակի։

10 միավոր

4. Սևակի սիրո ճանապարհը «Երեքնուկ»-ից (Ա՛խ, ես գիտե՛մ, չէի՛ր սիրում) մինչև «Երգ երգոց» (Գարունն այս անգամ ձմռանը եկավ, Այն էլ հյուսիսում…, 2-3 բանաստեղծություն կամ մեկ պոեմ)։

«Չէ՛, ինձ չէի՛ր, չէի՛ր սիրում….», «Իմ Սուլամիթա՛», «Ես ատում եմ քո անունը…», «Առաջին սերը..», «Գլխապտույտ» և այլն (քո՛ ընտրությամբ, ցանկացած ճիշտ ընտրություն ընդունելի է)։

10 միավոր

Հանրապետական հանձնաժողովի նախագահ՝ Ս. Աբազյան